Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

Առավոտ
a r a v o t d a i l y
օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ
76/4172/ 25 ապրիլի 2012 չորեքշաբթի
ISSN 1829-2224
12064
9 771829 222003

# Հմայակին առաջարկել են Քաղաքագետների միության տեղը ռեստորան բացել



Միասնական շտաբը մինչ կձեւավորվեր, Քաղաքագետների միությունում տարբերաբար լսումներ էին կազմակերպվում՝ ընտրությունների հանրային վերահսկողության թեմայով: Այդ լսումների առաջին նիստերից մեկի հյուրը ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանն էր: Նա առաջին անգամ այդ ժամանակ է այցելել Քաղաքագետների միության շենք ու Հմայակ Հովհաննիսյանի պատմելով՝ հիացել շենքով: Aravot.am-ի հետ զրույցում Հ. Հովհաննիսյանը պատմեց, թե ինչ է առաջարկել իրեն Գալուստ Սահակյանը՝ շենքի պայմանները տեսնելով. «Մեր վարչության անդամների ներկայությամբ Գալուստն ասեց՝ տնաշե՜ն Հմայակ, փոխանակ այստեղ մի կարգին բան սարքեիր, ռեստորան բան... մարդկանց մի կարգին հաց տայիր՝ սարքել ես ստեղ գալաջի անելու տեղ: Ես էլ ասեցի՝ մենք մենակ հոգեւոր հացով ենք օգտակար լինում, մեր տվածը միայն մտավոր հաց է»:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ Հմայակ Հովհաննիսյանն ահազանգել էր, որ ՀՀԿ-ականներն ուզում են իր ձեռքից խլել Քաղաքագետների միության տարածքը: Լսումներից հետո նրա վրա ճնշումներ են սկսել գործադրել՝ տարածքը վաճառելու համար:

Իսկ թե ինչ են զգուշացրել Հմայակ Հովհաննիսյանին՝ էջ 2:

Ա

## Սխալ հաշվարկ

Եվ այսպես, այսօր ակնհայտ է, որ Հայ ազգային կոնգրեսն այս ընտրարշավում իր հույսը կապում է նրա հետ, որ ԲՀԿ-ն, բավականաչափ ձայներ հավաքելով, կկարողանա Սերժ Սարգսյանի նկատմամբ դրսեւորել ընդդիմադիր կամ կիսաընդդիմադիր կեցվածք, ինչի արդյունքում ներկայիս նախագահի իշխանությունը կթուլանա, եւ առաջիկա նախագահական ընտրություններում ավելի լավ շանսեր կունենա Լեւոն Տեր-Պետրոսյանը: Դրա անուղղակի հաստատումը փոխադարձ ռեւերանսներն են, Վարդան Օսկանյանի եւ Հմայակ Հովհաննիսյանի ընդդիմադիր ելույթներն են, ինչպես նաեւ այն, որ առաջին եւ երրորդ նախագահի քարոզչությունը սեւեռվել է «ժառանգության» վրա, կարծես թե շատ կարեւոր է, թե կունենա՞ այդ կուսակցությունը 5-7 հոգանոց խմբակցություն, թե՞ ոչ:

Մի խոսքով, ՀԱԿ-ը, զգալով, որ չունի բավականաչափ սեփական մարդկային եւ նյութական ռեսուրսներ, որոշեց «ռեժիմի դեմ» պայքարել ԲՀԿ-ի ռեսուրսների միջոցով: Մի կողմ թողնենք, թե որքանով է դա, ի վերջո, վնասելու «ռեժիմին», որի արմատները շատ ավելի խորն են, քան որեւէ կուսակցության կամ որեւէ անհատի (այդ թվում՝ երեք նախագահների) «չար կամքը»: Խնդիրն այն է, որ, հաշվարկը, ինձ թվում է, հիմքից սխալ է. նման պահվածքով ՀԱԿ-ը իր ընտրողներին նվիրում է ԲՀԿ-ին:

Եթե դու ծայրահեղ ընդդիմադիր ես, ունես որոշակի հեղինակություն եւ ասում ես, որ նույն իշխանության մեջ կան անտանելի, ազգակործան, աղետաբեր ավազակներ՝ ի դեմս ՀՀԿ-ի, եւ քիչ թե շատ տանելի, «կիսամարխուշ» եւ նույնիսկ մի քիչ էլ համակրելի ավազակներ՝ ի դեմս ԲՀԿ-ի, դա նշանակում է կոչ անել քվեարկել ոչ թե սեփական քաղաքական ուժի, այլ հենց ԲՀԿ-ի օգտին: Ինչո՞ւ է այդպես Հայաստանի պայմաններում. 1/ որովհետեւ մեր պահպանողական եւ զգուշավոր քաղաքացիները, որպես կանոն, չեն գնում ծայրահեղականների, բղավողների, հայհոյողների ետեւից եւ գերադասում են «իշխանության մեջի ժողովրդի մասին մտածողներին», 2/ որովհետեւ ոչ միայն մեր երկրում, այլեւ ամենուր ընտրողները հարցին պրագմատիկ են մոտենում. եթե նրանք չեն ուզում ընտրել իշխանությանը, ապա համախմբվում են մյուս բեւեռից առավել ուժեղի, «անցնելու» առավել մեծ շանսեր ունեցողի շուրջ: Այդպես, 96 թվականին Սերգեյ Բադալյանի կոմունիստական ընտրազանգվածի զգալի մասն անցավ Վազգեն Մանուկյանին, 98-ին վերջինիս էլեկտորատը փոխանցվեց Կարեն Դեմիրճյանին եւ այլն:

Իսկ որ ընտրություններից հետո ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն դաշինք կկազմեն՝ չեմ կասկածում: Նույնիսկ գրազ չեմ գալիս զուտ մարդասիրական նկատառումներով՝ ինչո՞ւ օգտվեմ մարդկանց միամտությունից: Կասկածում եմ ուրիշ բանում՝ այդ իր ալտրուիստական խաղերից հետո ՀԱԿ-ը կհավաքի՞ 7 տոկոս ձայն: Հուսով եմ, որ կհավաքի:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

### ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

#### Տվեք մեր մեքենաները

«Մարդը 50 հազար ռուբլի տվեց, որով կարող էր 8-10 մեքենա գնել, բայց վերադարձրին 250 դրամ, որով մի շիշ ջերմուկ կամ երկու հատ զուգարանի թուղթ հազիվ առնեն: Է՞ս էր ձեր քաղաքականությունը»,- երեկ «Առավոտի» հետ զրույցում ասաց ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանը: Մեր հակադարձմանը՝ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանն ասում է, որ «Հայխնայբանկի» ավանդներն իրենք կվերադարձնեն՝ բավականին արժանապատիվ գումար, վաուչերների տեսքով, որոնք կարող են նաեւ հետնորդներին անցնել, Թովմասյանը պատասխանեց. «8 տարի իշխանության էիք՝ անեիք»,- հավելելով, որ ՀԿԿ-ի ծրագրային կետերից մեկն էլ վերաբերում է ավանդների, սեփականաշնորհման եւ մյուս գործընթացների վերանայմանը: Կոմունիստները նաեւ մեղավորներին պատասխանատվության են կանչելու:

Կարդացեք էջ 3:

#### Արաբոյի Մանվելի տեղը Բելաջոյի Գրի՞շն է եղել

«1992 թվականին, երբ ադրբեջանական զորքի հեղեղը գալիս էր, համատարած գաղթ ու խուճապ էր Շահումյանով, Մարտակերտով, ու բոլորը փախչում էին, փառք Աստծո, վիդեոգրողիսներն էլ կան. երեւի Սերժ Սարգսյանը Բելաջոյի Գրիշի՞ն է խնդրել, որ կանգնեցնի այդ հեղեղը: Գուցե ասել է՝ բա, Գրիշ ջան, հեղեղը գալիս է, գնա՝ կանգնեցրու: Իսկ մենք, Արաբո ջոկատը, կանգնել ենք դրա դեմ, 70-80 զոհ ենք տվել ու 2-3 օր մի կերպ կանգնել ենք... գուցե իմ տեղը Բելաջոյի Գրի՞շն է եղել: Երեւի դրա՞ համար է նախագահը Բելաջոյի Գրիշին սատարում»,- թիվ 11 ընտրատարածքում առաջադրված Մանվել Եղիազարյանն այսպես պատասխանեց «Առավոտի» հարցին՝ ինչո՞ւ ՀՀԿ-ն չի սատարում իրեն՝ հաշվի առնելով նրա ԵԿՄ անդամ լինելը, իսկ «Երկրապահը» հայտարարել է, որ հանրապետականների հետ է:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

#### Եվս մի ինքնաբացարկ ՕԵԿ համամասնական ցուցակից

Մասիսի շրջանում «Օրինաց երկիր» կուսակցությունը միշտ հենվում էր «Բույսերի աշխարհ» արտադրական կոոպերատիվի հիմնադիր, հեղինակություն վայելող Միհեր Համբարձումյանի վրա՝ Դաշտավան գյուղից: Նա միշտ աջակցել էր ՕԵԿ-ին ու կուսակցության համամասնական ցուցակում 18-րդ համարն է: Սակայն մեր տեղեկություններով՝ խնդիրներ են առաջացել, եւ Միհեր Համբարձումյանը երեկ ինքնաբացարկ է հայտնել ցուցակից եւ հանել ՕԵԿ այն ցուցապաստառները, որոնք իր ծախսերով տեղակայել էր Մասիսի շրջանում: «Օրինաց երկիր» կուսակցությունից հաստատեցին մեր այս տեղեկությունը:

### ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

#### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Հայելի» ակումբի հյուրն է ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը:

#### Եղանակ

Երեւան + 7 + 23, Շիրակ - 1 + 17, Կոտայք - 1 + 17, Գեղարքունիք - 1 + 17, Լոռի + 3 + 19, Տավուշ + 7 + 21, Արագածոտն լեռներ - 1 + 17, Արագածոտն նախալեռն. + 5 + 22, Արարատ + 5 + 23, Արմավիր + 5 + 23, Վայոց Ձոր լեռներ - 1 + 17, Վայոց Ձոր նախալեռն. + 5 + 23 , Սյունիքի հովիտներ + 9 + 19, Սյունիքի նախալեռներ + 4 + 17,

Ա aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 25.04.2012



## Արամ Մանուկյանը Արաբկիրում ՀՀԿ թեկնածուի պարտությունը երաշխավորեց



ՀԱԿ թեկնածու Արամ Մանուկյանն այս օրերին տնետուն, դռնեդուռ այցելություններ է կազմակերպում եւ արդեն ավելի քան 1300 բնակչի հետ է զրուցել. «Ընդհանուր վիճակն այս է՝ մոտ 30 տոկոսը ֆիզիկապես չկա, դռները փակ են, մնացած 40 տոկոսի մոտ պարտադիր կան բացականեր, կեսից ավելին դրսում մարդ ունի, ընդհանուրի 30-40 տոկոսը հուսահատ է, պասիվ ու չի հավատում որեւէ քաղաքական ուժի, իսկ ակտիվ մասը՝ 40 տոկոսը, ընդդիմադիր է: Հանդիպել եմ Դաշնակցության, «Ժառանգության», «Բարգավաճ Հայաստանի» համախոհներին, ամենաքիչը հանրապետականներն են, համարյա չեմ հանդիպել, որ բաց ճակատով, հպարտությամբ ասեն, որ Հանրապետական կուսակցությունն են ներկայացնում»:

Պարոն Մանուկյանը հավատում է՝ եթե կարողանա պասիվ ու հուսահատ ընտրողներին ընտրության բերել, աննախադեպ արդյունքներ կստանան. «Եթե այդ պասիվ 40 տոկոսի կեսին էլ կարողանամ ակտիվացնել, հույս ներշնչել, որ գան ընտրության մասնակցեն, ում էլ ուզում են ձայն տան, դա կլինի հաջողություն: Եթե մասնակցությունը շատ լինի, ես կարծում եմ, որ այստեղ Հանրապետականի պարտությունը երաշխավորված կլինի»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

Այսօր, երբ անկախ Հայաստանի հինգերորդ գումարման խորհրդարանի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ավարտին մնացել է տասն օրից էլ պակաս, Սիվիլնեթը հրավիրում է ձեզ հանրային նախընտրական բանավեճերի շարքից երրորդին, որին մասնակցելու հրավեր ուղարկվել է ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին:

Բանավեճը տեղի կունենա այս չորեքշաբթի՝ ապրիլի 25-ին, ժամը 14:00-ին, «Անի Պլազա» հյուրանոցի «Անի» սրահում:

Բանավեճը կվարի
«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արամ Աբրահամյանը

Նախորդ բանավեճերի տեսագրությունները կարող եք գտնել առցանց:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119

Ընտրական եռուզեռից բացի, այս օրերին Հայաստանը զբաղված է նաեւ Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցին նվիրված միջոցառումներով:
Ապրիլի 23-ի երեկոյան կմեկնարկի ջահերով երթը, ինչին հետեւել կարող եք Սիվիլնեթի եթերում:

Ապրիլի 24-ին Սիվիլնեթը կներկայացնի տարբեր տեսանյութեր Ցեղասպանության ճանաչման եւ ժխտման մասին:

Այս երկու օրը նաեւ նշանավորվեց «Երեւանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումներով:
Բոլորի մասին նյութերը՝ Սիվիլնեթում:

Սպասում ենք ձեր արձագանքներին:

# «Հայ ժողովրդի ճաշը պատրաստ է»

### Պատգամավորի թեկնածու Մանվել Եղիազարյանի կարծիքով՝ մեր հասարակությունը նման է կաթսայում եփվող մսի, որի արնաջուրը մաքրելու համար մի հատ մեծ շերեփ է պետք:

«Բնության մեջ մի երեւույթ կա՝ մեղրի վրա էլ են հավաքվում, լեշի վրա էլ. այ, մեր դժբախտությունն այն է, որ հավաքվողները հավաքվելու են, բայց իմ հիմնական ընտրազանգվածն ուրիշ է՝ նրանք այլ կերպ են մտածում»,- «Առավոտի» հետ զրույցում այսպես գնահատեց իր հաղթելու շանսերը թիվ 11 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու առաջադրված Մանվել Եղիազարյանը, ով, ինչպես ինքն ասաց, ավելի շատ հայտնի է որպես արցախյան ազատամարտին մասնակցած՝ Արաբոյի Մանվել:

Այս նույն ընտրատարածքում պարոն Եղիազարյանի մրցակից թեկնածուներն են ՕԵԿ-ից՝ Հեղինե Բիշարյանը, Գրիգորի Մարգարյանը (Բելաջոյի Գրիշ) եւ ՀԱԿ-ից՝ Արշակ Բանուշյանը: Իսկ թե ո՞ւմ է իրապես մրցակից համարում՝ հարցին պարոն Եղիազարյանը պատասխանեց. «Միակ մրցակիցս անօրինականությունն է, ուրիշ մրցակից չունեմ»: Այսօր այդ ընտրատարածքի թեկնածուները բավականին մեծ գումարներ են ծախսում՝ պաստառների ու քարոզչության վրա, իսկ Մանվել Եղիազարյանն այս առնչությամբ, իր իսկ խոսքերով ասած՝ չի ուզում նկարը մեծացնի ու փակցնի պատերին՝ իրեն ճանաչելու համար. «Այդ գումարներով ավելի լավ բան կանեմ: Ավելի շուտ կօգնեմ այս կամ այն ազատամարտիկին, մի հայրենանվեր գործ կանեմ, դրանից բացի՝ ես ոչ մի գործ չունեմ Հայաստանում, որ ասեմ՝ ֆինանսներ եմ ստեղծում, որ նկարս բոնեմ կպցնեմ պատերին: Մեր նկարը պիտի լինի հայ ժողովրդի մտքի մեջ: Մի անգամ մի աղջիկ ասաց՝ մենք 11-րդ ընտրատարածքում հարցում արեցինք, ոչ ոք ձեզ չի ճանաչում: Ասացի՝ ճիշտ եք ասում, ո՞վ է ճանաչում Մանվել Եղիազարյանին, ես ե՞րբ եմ ելույթ ունենում հեռուստատեսությամբ կամ նկարս մի տեղ փակցնում, բայց դուք հարցրեք՝ Արաբոյի Մանվելին ճանաչո՞ւմ եք, ժողովուրդ, թե՞ ոչ: Ամեն մարդ իր գնահատականն է ստանում, ուզում ես՝ հազար հոգով եղիր, ուզում ես՝ 10, գնահատականը մեկն է՝ դա հանրության գնահատականն է: Արցախյան պատերազմի ժամանակ իմ ձեռքի տակ կար լավ զորք՝ Արաբո ջոկատը, ունեցել եմ Գերագույն խորհրդի մանդատ, ես ինձ պահել եմ որպես հասարակ քաղաքացի: Ես չեմ փորձել ձեռը վերցնել կամ ինձ վեր դասել ձեզանից»: Մյուս թեկնածուները ակտիվ քարոզարշավ են անում, եւ օրինակ՝ ՕԵԿ-ն էլ մարդկանց հրամցնում է իր արած գործերը եւ նոր բաներ խոստանում՝ կենսաթոշակների բարձրացում, ավանդների վերադարձ եւ այլն, իսկ Մանվել Եղիազարյան թեկնածուն քարոզարշավ չի իրականացնում՝ մեր այս դիտարկմանն էլ պարոն Եղիազարյանն ասաց. «ՕԵԿ-ը շատ ճիշտ է վարվում: Ասեմ՝ ինչու. եթե մի մարդ ձեզ խաբում է՝ դու մեղավոր չես, եթե նույն մարդը ձեզ 2-րդ անգամ է խաբում՝ արդեն մեղավորը դու ես: Չեմ ուզում վատ բաներ խոսել, բայցD ՕԵԿ-ը եղել է իշխանություն, ի՞նչ է արել: Իմ մարտական ընկերը՝ թեւը, ոտքը պոկված, 35 հազար թոշակ է ստանում: Ե՞րբ են բարձրացրել կամ բարձրացնելու թոշակը, եւս 5 կամ 9 տարի՝ այդ մարդը կմահանա: Մարդիկ արդեն պետք է տարբերեն ու հասկանան, որ ամեն առարկա իր անունով կոչելու ժամանակն է եկել: Մարդիկ էլ կան՝ խոսում են ալան-թալանի մասին, որը ինքն էլ պակաս չի արել, ու ժողովուրդը կանգնում, ասում է՝ մենք պիտի վերջ տանք դրան: Իմ չընտրվելն ինձ համար ցավ չէ, բայց ցավ է, եթե ընտրվեմ ու ժողովրդի համար ոչ մի լավ բան չկարողանամ անել ու վարկաբեկվեմ»:




Պարոն Եղիազարյանը մեզ հետ զրույցում ասաց՝ վստահ չէ, որ արդար ընտրություններ են լինելու, իսկ թե այդ դեպքում ինչո՞ւ է առաջադրվել, այսպես պատասխանեց. «Չպայքարել, նշանակում է՝ տանուլ տալ: Եթե ես պայքարում եմ, ուրեմն հաղթելու շանս ունեմ: Պարտվելուց էլ չեմ վախենում. է՜, հիմա մենք պարտված ենք, էլի, ժողովուրդը թողնում-գնում է Հայաստանից: Մենք քանի անգամ ենք ասել՝ բավական է, վերջ տվեք անօրինականություններին, մենք այս երկրում պիտի ապրենք, չգիտենք, թե ի՞նչ պիտի լինի մեր վերջը, այսպես ինչքա՞ն կարող ենք ապրել: Այս ընտրությունները օրինական երկիր սարքելու միակ ճանապարհն են: ԱԺ-ում 131 տեղ կա. մենք այդքան ազնիվ մարդ չունե՞նք, եթե չլինի՝ ուրեմն երկիրը կդատարկվի: Վերջապես, եթե մի ժողովուրդ չունի 100-200 մարդ, որ երկիրը կարգի բերի, այդպիսի ժողովրդին ոչ թե եղեռն, այլ սատկացնել է պետք: Իսկ մենք հաստատ ունենք այդքան մարդ»: Պատգամավորի մանդատ ունենալու դեպքում էլ, պարոն Եղիազարյանի վստահեցմամբ, կլրացնի այն ուժին, որը, իր խոսքերով ասած՝ կապ չունի՝ ընդդիմություն է, թե իշխանություն, հայրենանվեր գործ կանի. «Ինձ անձնական ոչինչ պետք չէ: Ինձ համար արդեն ուշ է վատը լինել: Իսկ այսօր ստացվել է մի միավոր, խոսքը բոլոր կուսակցությունների մասին է, կարծես թե հավաքվել են բարեկամներով, հարց են ուզում լուծել, ժողովրդի վստահված անձինք էլ դուրս են մնացել: Երբ լրացնում են կուսակցությունը, պետք է հավաքվեն ի շահ ժողովրդի, որպեսզի մի բան ստացվի»: Պարոն Եղիազարյանը թեեւ չի հավատում, որ օրինական ընտրություններ կլինեն, բայց ընտրությունների շեմին մի լավ բան է նկատել. «5 տարի առաջ որ ասում էին՝ 5-10 հազար բաժանել, սկսում էր աժիոտաժը, ու մարդիկ վազում էին: Այս տարի քիչ է. դա հասարակության հասունացման մասին է խոսում: Միեւնույն է՝ ժողովուրդը երկիր է սարքելու: Մեր ճաշի միսը եռացել է, էն վերեւի արնաջուրը մաքրելու համար մի հատ մեծ շերեփ է պետք: Հայ ժողովրդի ճաշը պատրաստ է: Ես ուզում եմ իրար հարգել, սիրելով՝ ժողովուրդ լինենք: 10 միլիոն հայ ենք, էդ ի՞նչ է, որ իրար չհարգենք: Այսօր ուժեղ, աշխատող մարդն է գնում Հայաստանից, հիվանդ մարդիկ են մնում, էն հայրենասեր մարդն էլ, որ մինչեւ հիմա համբերել է, էդ էլ կգնա, եթե արդար ընտրություններ չլինեն. ինչքա՞ն նստեն սպասեն, որ մեր այրերը ուտեն՝ կշտանան, որ հետո ժողովրդի մասին մտածեն»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Ծառուկյանը Հմայակին զգուշացրել է ՀՀԿ-ին քննադատելիս զուսպ լինել

Տպավորություն կա, որ Դուք ԲՀԿ-ի ցուցակ հատուկ ներդրվել եք՝ Սերժ Սարգսյանին, ՀՀԿ-ին քննադատելու համար եւ շատ հարմար կերպար եք այդ առումով՝ Աշոտյանին Էշոտյան եք ասում, անընդհատ քննադատում: Քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը Aravot.am-ի այս դիտարկման հետ չհամաձայնեց: Ավելին՝ հերքեց, որ ինքն է ասել Էշոտյան՝ արդարանալով, թե նրա ուսանողներն են ասել: Երբ հիշեցրինք, որ ասուլիսում է ասել՝ տասնյակ ԶԼՄ-ների ներկայությամբ, ձայնագրություններ կան՝ նա ասաց, որ լեզվի սայթաքում է եղել:

Ինչ վերաբերում է Սերժ Սարգսյանին հասցեագրված քննադատություններին, նա վստահեցրեց. «Ես Սերժ Սարգսյանին, Հանրապետականին երբեք չեմ փնովել: Ես Աշոտ Նավասարդյանի արձանի բացմանն եմ մասնակցել, ելույթ եմ ունեցել, այդ շաբաթաստիկ Լիսկան էլ այնտեղ ունկնդիրների մեջ էր, բուռն ողջույններով է ընդունվել իմ ելույթը: Մենք Անդրանիկ Մարգարյանի հետ շատ մտերիմ ենք եղել: Ես ինչո՞ւ պիտի փնովեմ Հանրապետականին: Ես առաջինը հրավիրել եմ Միասնական շտաբ հենց Գալուստ Սահակյանին ու ընդունել փառահեղ ձեւով: Ուղղակի իրենք չհասկացան ինձ: Եթե Անդրանիկը ողջ լիներ՝ կհասկանար, Գալուստը չհասկացավ: Եթե ես մի բան անում եմ, ես անում եմ՝ նկատի ունենալով, որ լուրջ արդյունք է լինելու: Միանշանակ ասեմ՝ ես հակաՀՀԿ-ական բան չեմ ասել, ո՞նց կարող եմ ես Հանրապետականի նկատմամբ ոչ բարյացակամ լինել: Ես պարտավոր եմ լինել բարյացակամ՝ տուրք տալով Աշոտ Նավասարդյանի, Անդրանիկ Մարգարյանի, Վազգեն Սարգսյանի հիշատակին: Բայց երբ ես տեսնում եմ, որ նորելուկ հանրապետականները՝ Տիգրան Սարգսյանի կերպարով, այդ կուսակցության հերն անիծում են, ես չեմ կարող դրան չանդրադառնալ»:

Մեր հարցին՝ Գագիկ Ծառուկյանի կամ որեւէ այլ մարդու կողմից Ձեզ հստակ հրահանգ չկա՞ ցեխ շպրտել կամ, այսպես ասած, «կպնել» ՀՀԿ-ին՝ նա պատասխանեց՝ ոչ. «Ընդհակառակը՝ Գագիկ Ծառուկյանն անընդհատ զրույցներում ինձ զգուշացնում է, որ պետք է լինել զուսպ եւ կասկածի տակ չդնել իրենց գործընկերային հարաբերությունները: Եվ դա նա ճիշտ է անում, նա քաղաքական մարդ է: Ես կիսում եմ նրա ասածը, որովհետեւ գիտեք ինչ, իշխանությունը նման համակարգերում հնարավոր է փոխել միայն ներսից: Փողոցից փոփոխություն հնարավոր չէ, դա բերում-հանգեցնում է Մարտի 1-ի: Իսկ ինչ վերաբերում է Օսկանյանին, նրա քննադատությունը ես չէի ասի, որ անզուսպ է եւ սանձարձակ: Միանգամայն հիմնավորված, չափված-ձեւած քննադատություն է, ուղղակի կոշտ քննադատություն է: Բայց իրենք, իհարկե, կուզենային, որ մենք քննադատեինք իրենց այնպես, ինչպես դիլն էր քննադատում Սերժին: Որովհետեւ այդ կարգի քննադատությունն ավելի դյուրամարս է, քան այն քննադատությունը, որը հիմնվում է փաստերի, փաստարկների վրա: Դրա համար իրենց թվում է, որ այս քննադատությունը ծանր է: Իրականում մեր ձեռքն է ծանր»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

Առավոտ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 25.04.2012

# «Զրպարտությունն ինչքան լկտի՝ հավատացողներն այնքան շատ»

## ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանը՝ ՀՀԿ-ՀԿԿ համագործակցության, իշխանական «զուռնաչիների» եւ ժողովրդի «սեւ սրտի» մասին:




- Ամփոփելով քարոզարշավի անցած փուլը՝ ՀՀԿ գործադիր մարմինը նախորդ օրը ուղերձ է հրապարակել, որով հանրապետականների համար «խաղի կանոններ» են սահմանվում: «Մենք բոլորս պարտավոր ենք անել ամեն ինչ, որպեսզի մայիսի 7-ին բաց ճակատով նայենք միմյանց եւ շնորհավորենք իրար ոչ միայն ընտրությունների արդյունքների, այլեւ նոր որակի ընտրությունների կազմակերպմամբ»,- ասված է ուղերձում: Անկե՞ղծ է ՀՀԿ-ի այս պատգամը:

- Հիմա շատերն են ուղերձներ հղում, որպեսզի ընտրություններն ազատ, արդար, թափանցիկ անցնեն, բայց ՀԿԿ-ն միշտ դրա անկեղծ կողմնակիցն է եղել, մանավանդ՝ իմանալով, որ չի կարողանում հսկել իր ձայները: Անցյալ ընտրություններում միայն 250 ձայն Արագածոտնի մարզում գողացան: Մենք ուզում ենք հավատալ այդ անկեղծությանը, բայց ժողովրդին էլ պետք է հավատ ներշնչել: «Ներքեւներում» բոլորովին այլ իրադրություն է: Այսօր էլ շարունակում են կաշառք, տարբեր ապրանքատեսակներ բաժանել, այսօր էլ կան մի շարք արատավոր երեւույթներ, որոնք չեն համոզում, որ ընտրությունները կարող են արդար ու թափանցիկ ընթանալ: Ամեն անգամ էլ ասել են՝ արդար, թափանցիկ ու «աշխատել» են նույն մեթոդներով:

- Կոմկուսն էլ բավականին մարզային այցելություններ ունեցավ քարոզարշավի անցած փուլում: Դուք ի՞նչ տպավորություններ ունեք:

- Կոմունիստական կուսակցությունը երբեք իր հետ ավտոբուսներով մարդ չի տանում, զուռնաչիների չի տանում, երգիչների չի տանում: Ժողովրդի սեւ սրտին էդ մխիթարանք չի, մենք դա հասկանում ենք: Մենք մեր տեսահոլովակներում էլ մոնտաժ չենք անում՝ մարդաշատ հանդիպումներ ցույց տալու համար, թե իբր մարդիկ իրար սպանում էին էդ հանդիպմանը ներկա գտնվելու համար... Փողային հրավառություն է այսօր տեղի ունենում՝ այն դեպքում, երբ ժողովուրդը սոված է, գործազուրկ է, գաղթում է երկրից: Բա մեզ ու մեր ժողովրդին սա սազո՞ւմ է: Պատմում էին, որ մի թեկնածու վարսավիրանոցի ծախսերն է հոգում...

Կոմկուսը գնում է շատ համեստ, հանգիստ՝ բացատրելով իր գաղափարախոսության առավելությունը: Մեր ուշադրության կենտրոնում այսօր երիտասարդներն են: Մեր երիտասարդության վիճակն է շատ ծանր, երիտասարդների ապագան է խորտակվում, որովհետեւ այսպես շարունակելուց հետո երկիրը եկող հինգ տարիների ընթացքում իսկապես ծանրագույն վիճակի մեջ կհայտնվի:

22 տարի՝ նույն դեմքերն ու նույն կուսակցությունները, էլ չեմ ասում խոստումները, որոնք ամբողջությամբ վերցված են Կոմկուսի ծրագրից ու գաղափարախոսությունից: Անցած օրը մի գյուղում լսեցի, թե ինչպիսի հայհոյախառն արտահայտություններ էին հնչում այդ քաղաքական ուժերի հասցեին: Ասում էին՝ մեզ ուզում են էլի խաբե՞լ, էս ի՞նչ խոստումներ են տալիս: Սա է իրական պատկերը:

- Հանրությունը հիասթափված է ե՛ւ գործող, ե՛ւ նախկին իշխանություններից, որոնք հավակնում են վերադառնալ. դա ի՞նչ հնարավորություններ է տալիս Կոմկուսին: Ձեր տպավորությամբ՝ ի՞նչ արդյունքներ կարող է արձանագրել ՀԿԿ-ն այս ընտրություններում:

- Այս հակաժողովրդական համակարգը 22 տարի թալանելուց ու ժողովրդին զրկելուց բացի՝ այլ բան չի արել: Հանրությունն էլ հիասթափված է, այդ հիասթափության մեջ էլ երանությամբ են հիշում կոմունիստական ժամանակաշրջանը: Ժողովուրդը լավ է տրամադրված մեր նկատմամբ եւ մեզ ձայն է տալու:

- Հասարակական որոշ շրջանակներում տեսակետներ հնչեցին, որ Կոմկուսին ընտրապայքարի մեջ է «մտցրել» իշխող ՀՀԿ-ն՝ նաեւ ֆինանսապես աջակցելով, որպեսզի Հայ ազգային կոնգրեսից ձայներ խլեն:

- Մինչեւ քարոզարշավը սկսելը Կոմկուսին քի՞չ էին զրպարտում: Զրպարտությունն ու սուտը ինչքան լկտի լինի՝ հավատացողներն այնքան շատ կլինեն: Մեզ զրպարտողներն են ՀՀԿ-ի հիմնական հենարաններից մեկը: Նրանք, ովքեր ավազակապետության մասին հայտարարություններ արեցին, հետո իջան ներքեւ՝ մինչեւ անգամ համագործակցության պատրաստակամություն հայտնեցին: Ես ժամանակին հենց «Առավոտի» միջոցով եմ ասել, որ Հայ ազգային կոնգրեսը հայ ազգային կատակերգություն է, եւ դա ցույց տվեց նրանց անցած ճանապարհը: Տեսնում են, որ էլ հաջողություններ չունեն... էդ դուք եք եկել ՀՀՇ-ի կերպարանքով՝ երկիրը թալանել, քանդել տվել, 13 միլիարդը թալանել, կեղծ վաուչերիզացիա արել... ամբողջ հանրապետությունը ձեզ լավ է ճանաչում՝ ՀԱԿ-ի տակ մի թաքնվեք:

Ինչ վերաբերում է ՀԿԿ-ի ու ՀՀԿ-ի համագործակցությանը, ֆինանսավորմանը... ի՞նչ անեմ, անուննե՞ր տամ, թե ՌԴ-ի հայ համայնքից ովքեր են ինձ օգնել: Այդ իրենք եւ իրենցից «ծնվածներն» են, որ ԱՄՆ դեսպանատան դիմաց հերթի են կանգնել, որի մասին դեսպանատունն էլ հայտարարություն արեց. թող ուղտը չնստեն ու կուզեկուզ ման գան, ժողովուրդը բոլորին էլ լավ ճանաչում է: Եթե ՀՀԿ-ն է մեզ ֆինանսավորում՝ ինչի՞ էր Լեւոն Տեր-Պետրոսյանն ասում՝ համաձայն է, որ երկիրը կոմունիստներն ու դաշնակները ղեկավարեն: Որովհետեւ իրենք զգացին, որ ղեկավարելու ունակ չեն, մակերեսային են տեսնում երկրի ապագան:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### Երեւանի անվան փոփոխությունը ազգային նշանակության հա՞րց է

Լեռնային Ղարաբաղի հիմնահարց, Հայ Դատ, ազգային գաղափարախոսություն. սրանք այն հիմնահարցերն են, որ տեղ են գտել մայիսի 6-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների քաղաքական ծրագրերում:

Aravot.am-ն ուսումնասիրեց «Միավորված հայեր» կուսակցության (ՄՀԿ) ծրագիրը՝ պարզելու, թե նշված խնդիրների լուծման կապակցությամբ ինչ է առաջարկում քարոզարշավի ընթացքում ոչ այնքան ակտիվ հանդես եկող քաղաքական այս ուժը: Պարզվեց, ՄՀԿ-ն ազգային հոգեկերտվածքի եւ բարոյականության տեսանկյունից նպատակահարմար է համարում հայոց բուն թվականության վերականգնումը մ.թ.ա. 2492 թվականից, պետականորեն օգոստոսի 11-ը որպես հայոց նոր տարվա՝ Նավասարդի նշումը, Երեւան քաղաքի Էրեբունի անվան պետականորեն վերականգնումը:

Թե նշված փոփոխությունների արդյունքում արդյոք հայերի ազգային նկարագրից կվերանա՞, օրինակ, օտարամոլությունը, կամ արդյոք հայերն ավելի քի՞չ կսկսեն լքել Հայաստանը, կամ արդյոք Երեւանի անվան փոփոխությունից հետո մարդիկ ավելի բարեկեցի՞կ կապրեն, պարզ կլինի այն ժամանակ, երբ ՄՀԿ-ն հաղթահարի ընտրողների ձայների 5 տոկոս նվազագույն շեմը եւ մուտք գործի խորհրդարան:

Մյուս ազգային նշանակության խնդիրը՝ Հայ Դատը, ըստ այս կուսակցության՝ պետք է դառնա ընթացիկ եւ առաջային միտված ազգային-պետական քաղաքականության առանցքային հարց: Նկատենք, որ այս առումով իր քաղաքական ծրագրում ՄՀԿ-ն լուծման որեւէ ճանապարհ չի առաջարկում:

ԼՂՀ հարցի կարգավորման առումով էլ կուսակցությունն անհրաժեշտ է համարում միջազգային կառույցների հետ ԼՂՀ-ի ինտեգրման նպաստումը՝ որպես Արցախի ինքնորոշման եւ անվտանգության գրավական, հակառակ դեպքում ՄՀԿ-ն առաջարկում է ճանաչել Արցախի անկախությունը ՀՀ կողմից:

Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Տրակտորի գործով պարոն Օսկանյանին հարցրեք»

«Եթե դուք նկատի ունեք Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանի սեփականատիրոջը եւ նրա որդուն, որը նաեւ ԱԺ պատգամավոր է, ապա պետք է ասեմ, որ տարիներ շարունակ նրանք արել են այդ գործունեությունը, եւ դա կապ չունի ոչ ընտրարշավի, ոչ էլ ՀՀԿ-ի հետ: ՀՀԿ-ն եւ ՀՀԿ-ին պատկանող անհատներին պետք է տարբերել»,- այսպես արձագանքեց ԱԺ փոխխոսնակ, ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը Aravot.am-ի այն դիտարկմանը, որ թեեւ ամենաշատը ՀՀԿ-ն է խոսում ընտրակաշառքների դեմ, բայց ամենաշատ տեղեկություններ ստանում ենք հենց ՀՀԿ-ի կողմից տարբեր դրսեւորումների մասին, որոնք այս փուլում այլ բան, քան ընտրակաշառք, չի կարելի դիտարկել: Մասնավորաբար, Ներկայումս Զանգեզուրում, Կապանում եւ Քաջարանում ՀՀԿ-ն անվճար վիրահատություններ է անում: Որպես Վահե Հակոբյանին եւ այդ ընտանիքը շատ լավ ճանաչող մարդ՝ Շարմազանովը քաջատեղյակ է նաեւ, որ նրանք ոչ միայն Զանգեզուրի բնակիչներին են օգնել, այլ նաեւ լոռեցիներին: «Եթե մարդը ունի առողջական խնդիր, որին հրատապ բժշկական միջամտություն է պետք, պարզ է, որ բարոյական չէ սպասել մինչեւ մայիսի 6-ը: Ասել՝ ինչ կլինի՝ կլինի, կամ կմեռնես, կամ սաղ կմնաս, մայիսի 6-ից հետո քեզ կօգնենք վիրահատության համար: Մեղադրել կարելի կլիներ այն դեպքում, եթե դա անեին մարդիկ, ովքեր միայն ընտրությունների ժամանակ են ակտիվանում, իսկ Հակոբյանների ընտանիքը միշտ էլ շատ պատրաստակամ է եղել, եւ համոզված եմ, որ անկախ պառլամենտական ընտրությունների արդյունքներից՝ միշտ էլ կշարունակեն իրենց բարի գործը: Եվ դա ոչ մի կապ չունի ՀՀԿ-ի հետ»,- հավելեց Շարմազանովը:

Հետաքրքրվեցինք՝ այդ դեպքում ԲՀԿ-ի կողմից մարզերում ստեղծվող ավտոտրանսպորտային պարկը ինչո՞ւ է շահարկվում իբրեւ ընտրակաշառք, մանավանդ, որ ԲՀԿ-ականներն էլ ասում են, թե դա ընտրությունների հետ կապ չունի, եւ անկախ ընտրությունների արդյունքներից՝ իրենք էլ շարունակելու են համալրել մարզերում ավտոտրանսպորտային պարկը: Նաեւ, եթե այդ տեսանկյունից ենք դիտարկում, ԲՀԿ ղեկավարն էլ միշտ բարեգործություններ է արել: Մեր զրուցակիցը հակադարձեց. «Որեւէ մեկը, որպես քաղաքական գործիչ, իրավունք չունի բարեգործություն անելու: Իսկ տրակտորի գործով պարոն Օսկանյանին հարցրեք. տրակտորներից ու զենքերից ինքն ավելի լավ է խոսում, դա իր մասնագիտությունն է: Եվ երրորդ՝ մարդու առողջությունն ու տրակտորը չեմ կարծում, որ նույն հարթության վրա են: Մարդու առողջությունն ամենաբարձր արդյունքն է»:

Շարմազանովը նաեւ հավաստիացնում է, որ ՀՀԿ-ն միանշանակորեն պահպանելու է ՀՀԿ գործադիր մարմնի հրապարակած կանոնները, համաձայն որոնց՝ արդար եւ ազատ մրցապայքար, ապա նաեւ ժողովրդավարական ընտրություններ պետք է լինեն:

Իսկ այն, որ ՀՀԿ-ից ամենաշատն են նմանատիպ բողոքները ու դժգոհությունները, Շարմազանովը ըմբռնումով է մոտենում. «Թեթեւ տարբեր: Ամենաազդեցիկ ուժը ՀՀԿ-ն է, եւ եթե ՀՀԿ-ն պայքարում է հանուն Հայաստանի զարգացման, ապա գրեթե բոլորը պայքարում են ընդդեմ ՀՀԿ-ի: Իսկ եթե ընդդեմ են, բնականաբար, պետք է փորձեն սեւացնել ՀՀԿ-ին: Թույլերը միշտ էլ պայքարում են ուժեղների դեմ, բայց դրանից ոչ ուժեղներն են թուլանում, ոչ էլ թույլերն՝ ուժեղանում»:

Ի դեպ, մայրաքաղաքում նաեւ բաժանում են սկավառակներ՝ ՀՀԿ-ի քարոզարշավին երգող երգիչների երգերով, «Հավատանք, որ փոխենք» մակագրությամբ: Տուփի վրա նշված է, որ սկավառակները լույս են ընծայվել ընդամենը 1500 քանակով: Ակնհայտ է, սակայն, որ թիվը բավականին նվազեցված է: Հետաքրքրվեցինք՝ ինչո՞ւ է ՀՀԿ-ն փորձում թաքցնել նախընտրական ծախսերը: Շարմազանովը հակադարձեց. «ՀՀԿ-ն շատ հրապարակային է, եւ ես չեմ կարծում, որ սխալ տպաքանակ է գրված: Եթե դուք կարող եք ինձ 1501-րդ օրինակը ցույց տալ, ես այդ ժամանակ կհավատամ, որ մեզ մոտ նման խնդիր կա: Եթե մենք ցանկանայինք 5000 հատ տպել՝ 5000 հատ կտպեինք եւ կհրապարակեինք»:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Այս ԱԺ-ն ճակատագրական է լինելու

**«Առավոտի» հարցերին պատասխանում է թիվ 14 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու, ԲՀԿ-ական Բագմասեր Առաքելյանը:**



- Պարոն Առաքելյան, Դուք սպորտի բնագավառի մարդ եք, ինչո՞ւ միանգամից որոշեցիք մտնել քաղաքականություն:

- Ես ծնվել-մեծացել եմ մանկավարժի եւ սպորտային աշխարհում հանրաճանաչ մարդու ընտանիքում՝ պապս, որի անունը ես կրում եմ պատվով, մեր տարածաշրջանում ազատ ըմբշամարտի հիմնադիրն է եղել: Սպորտային ջիղը նրանից անցել է իր որդիներին, հետո՝ ինձ, համոզված եմ՝ կանցնի իմ որդուն: Ես 10 տարի դարձել եմ հանրապետության չեմպիոն, բազմիցս մասնակցել եմ Եվրոպայի առաջնություններին: Եկավ ժամանակ, որ պետք է ավարտեի իմ սպորտային կարիերան, եւ ինձ նշանակեցին մարզային սպորտկոմիտեի նախագահ: Հետո սկսեցինք ընկերություն անել Գագիկ Ծառուկյանի հետ: Ճիշտն ասած, ես պարոն Ծառուկյանի համար եմ մտել քաղաքականություն, դա կապված է իր անձի հետ: Մենք ընկերություն ենք անում ոչ միայն սպորտի մեջ, այլեւ քաղաքականության եւ՝ առհասարակ: Արդեն հինգ տարի է՝ ԲՀԿ անդամ եմ, եւ, հավատացեք, ցանկացած գործ, որ սկսում ենք պարոն Ծառուկյանի հետ, մեծ պատասխանատվությամբ ենք սկսում, որ պետք է պատվով ավարտին հասցնենք:

- ԱԺ-ում շատ կան կոճակ սեղմող պատգամավորներ, որոնք հիմնականում ՀՀԿ-ից եւ ԲՀԿ-ից են: Ի դեմս Ձեզ՝ ինչպիսի՞ պատգամավոր կունենանք:

- Իմ առաջադրվելը երկար մտածված ու քննարկված հարց է: Եվ եկանք պայմանավորվածության, որ ես չեմ լինելու պատգամավոր, որը 5 տարին մի անգամ է հանդիպում ժողովրդին, որ ես պետք է աշխատեմ. տարածաշրջանը շատ աղքատ է՝ լեռնային, նախալեռնային շրջան է, մարդիկ անբարենպաստ կլիմայի պայմաններում են ապրում, գյուղեր կան, որտեղ դույլերով են ջուր կրում: Ծրագրեր շատ կան իրականացնելու, գլոբալ խնդիրներ կան լուծելու: Ես այնպես եմ աշխատելու, որ հաջորդ ընտրապայքարում իմ քարոզարշավը նստած անցկացնեմ, այսինքն՝ ինձ եւ իմ գործերը ներկայացնելու կարիք չլինի, մարդիկ դա տեսնեն եւ զգան, ոչ թե օդում բաներ լսեն: Իսկ եթե զգացի, որ չեմ արդարացնում, վայր կդնեմ մանդատս: Իմ խառնվածքի մեջ չկա անշարժ վիճակը, ես ակտիվ եմ լինելու: Ժողովուրդը պետք է զգա, որ պատգամավոր ունի, ես չեմ ուզում դասվել այն պատգամավորների շարքին, ովքեր ստախոսի հեղինակությամբ են ապրում, իմ կյանքը դեռ առջեւում է, եւ եթե այս տարիքում քաղաքականության մեջ հեղինակազրկվեմ, չեմ կարող հետագա կյանքի համար ճիշտ կարիերա ստեղծել: Իսկ ինչ վերաբերում է կոճակ սեղմող լինելուն, ասեմ Գագիկ Ծառուկյանը որքան բարի է, այնքան էլ պահանջկոտ ու խիստ է աշխատանքի մեջ, ուստի ես չեմ կարող չաշխատել: Միգուցե պատգամավորներ կան, ովքեր չեն խոսում, բայց իրենց տարածաշրջանում շատ գործ են անում, դե, եթե 131 պատգամավորն էլ խոսեն, պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կլինի ԱԺ-ի վիճակը: Իսկ ինչո՞ւ չեք ասում, որ ԲՀԿ-ից ունենք պատգամավորներ, ովքեր ծանր հրետանի են Ֆրակցիայի համար:

- Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է ժողովուրդը հույսեր կապում ընտրությունների հետ, հավատում թեկնածուների նախընտրական խոստումներին:

- Ես ունեմ ղեկավար, որը մեծ աշխատանքներ է կատարել ողջ հանրապետությունով մեկ, մեր արած գործերը տեսանելի են եւ փաստ: Ցավոք, մեր ժողովուրդը պատգամավորից ակնկալում է ասֆալտ, լուսավորություն, ուսանողի վարձ եւ այլն: Դա մեր երկրի սոցիալական վիճակից է գալիս: Բայց պետք է երկիրը փոխվի, եւ ԱԺ-ից շատ բան է կախված, իսկ այս ԱԺ-ն ճակատագրական է լինելու մեր ժողովրդի համար: Թող ժողովրդին չահաբեկեն, չսպառնան, թողնեն, որ մարդն ընտրի իր խղճի ձայնով: Իսկ ընտրողներին կոչ եմ անում չվախենալ ոչ մի սպառնալիքից:

- Դուք ունեք երկու ուժեղ մրցակից՝ ՀԱԿ ներկայացուցիչը, որն ունի իր անձնական եւ քաղաքական կայուն ընտրազանգվածը, եւ մյուս կողմում կա բավականին ուժեղ մի հասարակական կառույց՝ «Նիգ-Ապարանը»: Ո՞ւմ եք համարում Ձեզ հիմնական մրցակից եւ ինչպե՞ս եք գնահատում հաղթելու Ձեր շանսերը:

- Ռազմիկ Պետրոսյանի հետ երկար ժամանակ համագործակցել ենք, երբ նա Ապարանի քաղաքապետն էր: Ես իրեն հարգում եմ որպես անհատ եւ որպես ազգի համար կոված մարդ, կապ չունի, որ այսօր բարիկադի տարբեր կողմերում ենք: Ես նրան համարում եմ իրոք մրցակից: Իսկ մյուս թեւում, ինչպես ասացիք՝ «Նիգ-Ապարանն» է, այո, նույնպես ուժեղ կառույց է: Ավելացնելու բան չունեմ, կապրենք՝ կտեսնենք: Արդար եւ ազնիվ ընտրությունների արդյունքում առաջինը կշնորհավորեմ հաղթողին:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

## Արաբկիրի որոշ հասցեներ կջրազրկվեն



«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. ապրիլի 25-ին ժամը 9.00-ից մինչեւ ապրիլի 26-ը ժամը 21.00-ը կդադարեցվի Արաբկիր վարչական շրջանի Ղափանցյան փողոցի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Արարատյան 1-2 զանգվածների, Սեբաստիա, Մալաթիա, Բաղիկյան, Միրաքյան, Մելիքյան, Օտյան, Քուչակ, Մ. Գոշ, Գագարին, Ջամբուլի, Մանուկյան, Միքայելյան, Վազգենի, Մեծարենց, Դ. Վարուժան, Շրջանային, Կուրղինյան, Դուրյան, Վանտյան, Տիտով, Իսրայել Օրի, Ոսկանյան, Մարտիկյան, Ջիվանի, Մամիկոնյան, Շահումյան 1-7, 12-14, 16-18 փողոցների, Ծերենց փողոցի ու 1-ին նրբանցքի, Տիչինա փողոցի եւ 1-4 նրբանցքների ու 1-ին փակուղու, Նոյ եւ Մուշ թաղամասերի, «Մարիաննա» կաթնամթերքի գործարանի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

# Ցավազրկողներն այլեւս չեն օգնում

**Ջերմուկի բնակիչը լուրջ բուժման կարիք ունի**

Ջերմուկի բնակիչ, ղարաբաղյան պատերազմի մասնակից Գալուստ Գալստյանը մի շարք հիվանդություններ ունի եւ մեծ դժվարությամբ է տեղաշարժվում: Պատահում է, որ ամիսներով անկողնուց չի կարողանում վեր կենալ եւ չնայած ցմահ 2-րդ կարգի հաշմանդամ է, ըստ որի՝ անվճար բուժսպասարկում պետք է ստանա, սակայն, ինչպես Գալստյանն է «Առավոտի» հետ զրույցում պատմում, իրեն «մարդատեղ» չեն դնում. «Կամ սխալ դեղեր են նշանակում, որ չի էլ օգնում, կամ դեղերն են պարբերաբար ուշացնում, կամ էլ ընտանեկան բժիշկը հետազոտության համար ուղեգիրն այնքան անգրագետ է գրում, որ Ջերմուկից հասնում եմ Երեւան՝ ստուգվելու համար, ետ են ուղարկում, պատճառաբանելով, որ ուղեգրում հստակ նշված չէ, թե ինչ պետք է արվի: Ես էլ հազիվ եմ քայլում, բացի դրանից, ինչի՞ տեր եմ, որ բժշկի չիմացության պատճառով էդքան գնամ-գամ: Մոտ 60 հազար թոշակ եմ ստանում, իմ ընտանիքում էլ 5 շունչ կա, ո՞նց յոլա գնանք»:



Գալուստ Գալստյանի ներկայացմամբ՝ մի շարք հիվանդություններից բացի, այսօր ամենից շատ ողնաշարի ճողվածքն է անհանգստացնում: Նրա խոսքերով՝ օրերով այնպիսի ցավեր է ունենում, որ նույնիսկ ամենաուժեղ ցավազրկողն էլ չի օգնում. «Ինձ Մուրացանի հիվանդանոցում ասացին, որ միայն վիրահատությունից հետո վիճակս կբարելավվի, բայց վիրահատությունն էլ պետպատվերով չեն անում՝ թանկ է ու պետությանը ձեռնտու չէ: Բա էլ ո՞ւր մնաց պետպատվեր ասածը»: Սեփական միջոցներով էլ Գալուստ Գալստյանը, որքան էլ ցանկանա, չի կարող նման վիրահատության ծախսերը հոգալ. «Բացի թոշակիցս, քաղաքում խոտաբույսեր ենք վաճառում, դա էլ՝ օրական կոպեկներ են: Նույնիսկ օր է լինում՝ առեւտուր չի լինում: Երբ դեղերս էլ ուշացնում են, ստիպված իմ գրպանից եմ առնում, որ յոլա գնամ»: Մեզ հետ զրույցում Գալուստ Գալստյանն ասաց, որ նամակով դիմել է նաեւ առողջապահության նախարարություն: Այս առնչությամբ նախարարությունից մեզ հայտնեցին, որ Գալուստ Գալստյանն իրենց դիմել է ողնաշարի եւ կրծքավանդակի վերեւի հատվածի հետազոտության համար. «Քաղաքացու դիմումի հիման վրա նա ուղեգրվել է թիվ 1 համալսարանական կլինիկա՝ նշված հետազոտության համար»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# «Այ մարդ, գնա խելքի արի, մենք գիդանք՝ ում ա կըընտրանք»

Նախօրեին Գեղարքունիքի մարզում ՀԱԿ-ի հանրահավաքին մարտունեցիները նեղացան, երբ հարցրինք՝ չե՞ք վախենում, որ եկել եք Կոնգրեսի հանրահավաքին. «Ինչի՞ց կվախենանք, չհասկացա, ումի՞ց ա կվախենանք, ես 75 տարեկան մարդ եմ, քեզնի՞ց վախենամ, ումի՞ց վախենամ: Ոչ մեկից չենք վախենում, մենք կերթանք ու կըընտրենք մեր ուզած մարդուն, մեր ուզած կուսակցության, որ այս իշխանություններից պրծնինք»: Հավաքի մասնակիցներից մեկի՝ Դերզարյան Սաշիկի խոսքերով. «Երկիրը կործանվում է աղքատության մեջ: Լա տները գնացեք, լա մտեք տները: Էլ ստեղ իշխանություն չկա, Սերժ Սարգսյանը, Ռոբերտ Քոչարյանը, վարչապետը գոյություն չունեն: Լա մտեք տները՝ ոչ մեկն ապրելու միջոց չունի»: Մեր հարցին՝ բա ինչի՞ հաշվին են ապրում մարդիկ՝ նա պատասխանեց. «Ռուսաստանից: Կարտոշկեն ու կաղամբն է, ուրիշ միջոց չկա»:



Մարտունեցիները ոչ ոքից չեն վախենում, ում ուզում՝ նրան էլ ընտրում են:

Խոշոր եւ բարձրորակ կարտոֆիլի 1 կգ-ը գյուղացիները վաճառում են 150 դրամով, այն էլ՝ այս տարի բերքն առատ չի եղել, ու շատերը չեն կարողացել վաճառել. «Ամեն տնտեսություն 2 տոննա կարտոշկա ա կպախա, որ օգտագործա, թե չէ սովից կմեռնին»:

Մեր հարցին՝ այս օրերին Հանրապետականի կողմից ճնշումներ չե՞ն լինում ձեզ վրա, թե՝ գնացեք մեզ ընտրեք, մարտունեցիները պատասխանեցին. «Այ մարդ՝ գնա խելքի արի, մենք գիդանք ում ա կըընտրանք: Ո՞վ իրավունք ունի մեզ պարտադրի»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

Ա aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 25.04.2012

# «Վախենում են ճահիճը պղտորել»

## Ասում է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր Անահիտ Գեւորգյանը

2010թ. մարտի 24-ին ԼՂՀ ընդհանուր իրավասության դատարանը քննության դրեց Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղի հիմնական դպրոցի նախկին տնօրեն Անահիտ Գեւորգյանի վարչական գործը՝ ընդդեմ շրջվարչակազմի կրթության բաժնի վարիչ Արմիկ Ավանեսյանի թիվ 7 հրամանն անվավեր ճանաչելու պահանջով: Այդ հրամանով Անահիտ Գեւորգյանն ազատվել էր դպրոցի տնօրենի պաշտոնից: Անահիտ Գեւորգյանը դիմեց ԼՂՀ Գերագույն դատարան՝ բողոքարկելով դատական ակտը:

ԼՂՀ Գերագույն դատարանից Անահիտ Գեւորգյանը ստացավ իր բողոքը վերադարձնելու մասին որոշում: Ձեւակերպվել էր, թե տիկինը բաց է թողել բողոք բերելու ժամկետը: Սակայն ժամկետը բաց էր թողնվել ոչ թե Անահիտ Գեւորգյանի մեղքով, այլ, ինչպես հետագայում պարզվեց՝ դատարանի գործավարների պատճառով: ԼՂՀ Գերագույն դատարանն ի վերջո լսեց բողոքը եւ մերժեց Անահիտ Գեւորգյանի՝ նախկին աշխատանքում վերականգնվելու պահանջը:

Դատարանը, սակայն, «չնկատեց», որ Անահիտ Գեւորգյանը երբեւէ չի ենթարկվել կարգապահական տույժի, թույլ չի տվել որեւէ խախտում եւ իր աշխատանքը կատարել է բարեխղճորեն: Այս օրերին Ասկերանի շրջանի մի քանի դպրոցների տնօրեններ (Հովսեփավան, Կենտրոնական**D**) աշխատանքից ազատվեցին յուրացումների եւ այլ խախտումների համար:


Անահիտ Գեւորգյանը՝ աշակերտների հետ:

Անահիտ Գեւորգյանի դիտարկմամբ. «Գրեթե ոչինչ չկատարելով՝ ես էլ եմ տուժել եւ շարունակում եմ մնալ իրավունքներս չվերականգնած: Ես վստահություն չունեցող մարդ էի, նրանք էլ՝ վստահություն ունեցողները»: Մինչդեռ, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն, գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Մեկ այլ հոդվածով էլ նախատեսված է, որ գործատուն պայմանագիրը լուծում է, եթե աշխատողը թեկուզ մեկ անգամ թույլ է տվել աշխատանքային կարգապահության թեկուզ մեկ խախտում:

Հիշեցնենք, որ Անահիտ Գեւորգյանը Հայաստանի Հանրապետության առաջին Գերագույն խորհրդի պատգամավորն էր, որը թողնելով Հրազդանի դպրոցի տնօրենի աշխատանքը, 2006թ.-ին ինքնակամ գնաց Արցախ, շարունակելու մանկավարժական գործունեությունը:

Բացառիկ նկարագրի տեր անձնավորություն, անկաշառ, որին բախտ վիճակվեց, սակայն, դառնալ «վտանգավոր» Արցախի համար: «Վտանգավոր» դարձավ այն ժամանակ, երբ սկսեց իր իրավունքները պաշտպանել դատական ատյաններում:

Երեկ մեր զրույցի ժամանակ Անահիտ Գեւորգյանը տեղեկացրեց, որ դիմել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին եւ արդարադատության խորհրդին՝ խնդրելով Գերագույն դատարանի որոշումը վերանայելու իրավունք տալ իրեն. «Այդ նիստը օրինախախտումներով է տեղի ունեցել: Գերագույն դատարանի վճիռն այստեղ վերջնական է, եթե նոր հանգամանքներ չկան: Մինչդեռ նոր հանգամանքներն առկա էին: Դատարանն իր սխալ արձանագրության հիման վրա լուծում է տվել»:

Անահիտ Գեւորգյանն ասում է նաեւ, որ իր նկատմամբ Գերագույն դատարանն օրենքը կիրառել է քմահաճորեն. «Գերագույն դատարանի դատավոր Սուրեն Օհանյանի գլխավորությամբ մերժվել է իմ բողոքը: Առանց իմ պատճառաբանությունների, իմ միջնորդությունների, նույն սխալն արեցին, թողնելով առաջին ատյանի դատարանի վճիռը»:

Անահիտ Գեւորգյանը արդարադատության խորհրդին դիմելով ակնկալում էր, որպեսզի կարգապահական վարույթ հարուցեն դատավորների նկատմամբ, որոնք «անցել» են այս գործով: Դատավորներ Շուրա Օհանյանն ու Զոյա Օհանյանը պաշտոնանկ են արվել: Անահիտ Գեւորգյանն ասում է. «Իմ խնդիրը նրանց պաշտոնանկ անելը կամ պատժելը չէր, այլ արդյունքը, որ իրենց կայացրած սխալ դատական ակտի հետեւանքով ես աշխատանքում չեմ վերականգնվել: Իմ խնդիրը այդ սխալ լուծումը վերանայելն է»:

Նկատենք, որ ԼՂՀ արդարադատության խորհրդի նախագահը նույն ինքը՝ Գերագույն դատարանի նախագահ Արամայիս Ավագյանն է, սակայն նա կարո՞ղ է, ըստ Անահիտ Գեւորգյանի, «ճահիճը պղտորել»:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հ. Գ. Անահիտ Գեւորգյանը ներկայումս աշխատում է հայոց լեզվի ուսուցչուհի՝ 30 000 դրամ գումարով: Իր սոցիալական վատ վիճակի մասին էլ ասում է.«Ես հող ուտելով էլ կարող եմ ապրել»: Սակայն գտնում է, որ պիտի պայքարի, քանի որ չի ուզում՝ որեւէ մեկը կարծի, թե իր նկատմամբ անարդար վարվելով՝ կարող են դա մարսել: «Ես իմ երեխաներին ասում եմ՝ արդար եղեք, հետո չե՞ն ասի՝ այս էլ արդարը: Ցեխի մեջ թաթախվելն իմը չի: Ուզում եմ, իրոք, արդարությունը հաղթի»:

## Արձանագրել են հաշմանդամների ընտրելու իրավունքի խախտումներ

«Ունիսոն» հասարակական կազմակերպության 22 դիտորդներն իրենց առաքելությունը մայիսի 6-ի խորհրդարանական ընտրություններին կիրականացնեն Սյունիքի մարզում՝ Մեղրիում, Ագարակում եւ մի քանի գյուղերում: Այս մասին Aravot.am-ի հետ զրույցում ասաց կազմակերպության գործադիր տնօրեն Արմեն Ալավերդյանը. «Քանի որ Երեւանում շատ ենք արել ու մեծ փոփոխություններ չենք տեսնում տեղամասերի մատչելիության առումով, քարոզարշավի մատչելիությունը խուլ ընտրողների համար ինչպես մատչելի չէր, այնպես էլ հիմա, ինչը շատ հեշտ լուծվող հարց էր... որոշեցինք մարզում իրականացնել մեր առաքելությունը եւ մարզից ունեցած մեր ինֆորմացիան համեմատենք մայրաքաղաքի հետ»:

Նախընտրական շրջանում պարոն Ալավերդյանին մտահոգում է այն, որ հաշմանդամ մարդկանց ընտրելու իրավունքները ոտնահարվում են. «Տեղամասերի գերակշռող մեծամասնությունը, ներառյալ այն ընտրատեղամասը, որտեղ ես եմ քվեարկելու, ունեն բազմաթիվ աստիճաններ ու չունեն թեքահարթակ, որ ընտրողը կարողանա հանգիստ գալ ու իր պարտքը կատարել: Մեր ունեցած տեղեկություններով, շատ հաշմանդամ ընտրողներ, իմանալով՝ իրենց տեղամասն ունի ֆիզիկական մատչելիության խնդիրներ, գերադասում են չմասնակցել»:

«Ունիսոն» հ/կ-ի գործադիր տնօրենը նախորդ տարիների փորձով հաստատեց, որ արտասահմանցի դիտորդներից ընտրատեղամասերում զգաստանում են, բայց, միեւնույն ժամանակ, նրանց կարճատեւ այցելությունները տեղամասեր՝ գրեթե ոչինչ չի փոխում. «Նրանք այդքան թվով դիտորդ չեն ուղարկում, որ շուրջօրյա բոլոր տեղամասերում կամ գոնե քվեարկության, կամ ձայների հաշվման ժամանակ ներկա գտնվեն, ավելի լիարժեք կլիներ, եթե նրանք այնքան դիտորդ ունենային, որ կծածկեին ամբողջ հանրապետությունը եւ բոլոր ժամերին տեղամասեր կայցելեին»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը կհայտնվի՞ անելանելի իրավիճակում

Վերջերս Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի անդամ պրն Ուբեր Հենելը՝ QPC (Question Prioritaire de Constitutionnalitn սահմանադրականության վերաբերյալ առաջնային հարց) ընթացակարգի վերաբերյալ գիտաժողովի շրջանակներում, ելույթ է ունեցել Ստրասբուրգի համալսարանի Իրավաբանական, քաղաքական գիտությունների եւ կառավարման ֆակուլտետի ուսանողների առջեւ, ինչին հաջորդել է հարց-պատասխանը:

2008-ի հուլիսի 23-ին Ֆրանսիայում ընդունված QPC ընթացակարգը ներառվել է Սահմանադրությունում՝ դրա բարեփոխման գործընթացի շրջանակներում եւ ենթադրում է, որ յուրաքանչյուր քաղաքացի, ում որեւէ օրենքով մեղադրանք է ներկայացվում՝ իր դատավարության ընթացքում կարող է դիմել Սահմանադրական խորհրդին՝ հարցականի տակ դնելով այդ օրենքի սահմանադրականությունը:

Ստորեւ ներկայացնում ենք Իրավաբանական, քաղաքական գիտությունների եւ կառավարման ֆակուլտետի ուսանող Էմիլ Սահակյանի (լուսանկարում)՝ վերոնշյալ դասախոսությունից հետո տրված հարցը եւ պրն Հենելի պատասխանը:



Էմիլ Սահակյան. «Ես կցանկանայի ձեր կարծիքն իմանալ ինձ հետաքրքրող մի հարցի վերաբերյալ: Բոլորովին վերջերս Սահմանադրական խորհուրդը ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագիծը հայտարարեց հակասահմանադրական: Բոլորս տեղյակ ենք նաեւ, որ 1990 թվին ընդունված «Գեյսոն Ակտը» մի օրենք է, որով քրեականացվում է Հոլոքոստի ժխտումը: Ի՞նչ է սա նշանակում: Առաջինը՝ արդյոք սա չի նշանակո՞ւմ, որ մենք հիերարխիա ենք կիրառում ցեղասպանությունների միջեւ: Այսինքն, եթե որեւէ անհատ ժխտի հրեաների ցեղասպանությունը Ֆրանսիայում՝ նա կդատապարտվի ազատազրկման, իսկ հայերի ցեղասպանությունը (որը նույնպես օրենքի կարգավիճակ ունի) ժխտողը չի պատժվելու: Ես, բնական է, տեղյակ եմ երկու ցեղասպանությունները տարբերակելու այն փաստարկներին, որոնք առաջադրվել են մասնավորապես պրն Բադենտերի կողմից (քաղաքական գործիչ, նախագահ Միտերանի պաշտոնավարության ընթացքում՝ արդարադատության նախարար.-խմբ) Նյուրնբերգի միջազգային դատավարության գործոնի պատճառաբանությամբ: Սակայն, իմ կարծիքով, դա չի կարող հանդիսանալ լուրջ փաստարկ. առաջինը՝ այն պատճառով, որ Նյուրնբերգի դատավարությունը չի հռչակել Հոլոքոստը որպես ցեղասպանություն, այլ պարզապես դատապարտել է նրանց, ովքեր իրականացրել են այդ ոճրագործությունները, եւ երկրորդ՝ 1919-1920 թվականներին Թուրքիայում տեղի ունեցած դատավարության ընթացքում դատարանը նույնպես դատապարտել եւ մեղադրել է հայերի կոտորածն իրականացնողներին:

Եվ երրորդ՝ Ձեր ելույթի թեմային անդրադառնալով ուզում եմ ասել, որ, իմ կարծիքով՝ QPC ընթացակարգի առկայությամբ այս բանավեճը վտանգավոր դուռ է բացում, քանի որ այդ ընթացակարգի համաձայն յուրաքանչյուր ոք կարող է հարցականի տակ դնել «Գեյսոն Ակտի» սահմանադրականությունը, ինչի հետեւանքով Ֆրանսիան կհայտնվի քաղաքականապես երկիմաստ (կամ գրեթե լուծում չունեցող) իրավիճակում»:

Ուբեր Հենել. «Ես պետք է ձեզ հիասթափեցնեմ, ես պատասխան չունեմ: Ես ներկա չեմ գտնվել այդ քննարկմանը՝ այլ վայրում գտնվելու պատճառով: Ես ենթարկվում եմ վերապահում ունենալու խստագույն պահանջին եւ ես չեմ կարող մեկնաբանել Սահմանադրական խորհրդի որոշումը: Սակայն կարող եմ Ձեզ խորհուրդ տալ ուսումնասիրել Սահմանադրական խորհրդի կայքը եւ մասնավորապես՝ այն մեկնաբանությունները, որոնք բացատրում են վերոնշյալ քննարկման որոշման պատճառաբանությունը եւ հասունացումը: Եթե մենք խորանանք բոլոր այն տեխնիկական ասպեկտների մեջ, որոնք դուք ինքներդ ներկայացրեցիք, մենք չենք ավարտի այս բանավեճը: Սահմանադրական խորհուրդն ասել է, որ մենք չենք կարող արգելել պատմաբաններին քննադատաբար ուսումնասիրել այս խնդիրը, դա խոսքի ազատություն է: Խորհուրդը ավելի հեռու չի գնացել: Սրանից ավել ոչինչ չեմ կարող ասել: Ներող եղեք»:

Էմիլ Սահակյանը Aravot.am-ի հետ զրույցում ասաց, որ թույլ է տալիս իրեն չհամաձայնել պրն Հենելի հետ եւ որ ամենակարեւորն իր հարցադրման մեջ թերեւս այն է, որ «եթե որեւէ ազգայնական կամ նույնիսկ քաղաքական շանտաժ կիրառելու նպատակով այդ քայլին դիմող որեւէ անձ հայտարարի, որ Հոլոքոստ տեղի չի ունեցել եւ իր դատավարության ժամանակ դիմի Սահմանադրական խորհրդին՝ վիճարկելով «Գեյսոն Ակտի» սահմանադրականությունը, Սահմանադրական խորհուրդը կհայտնվի գրեթե անելանելի իրավիճակում»:

# ՀՀԿ-ն գտել է Աստծո հետ կապը

## ԲՀԿ-ն՝ արվեստագետի վարկը բարձրացնելու, իսկ ՀՅԴ-ն՝ բարոյական երկիր կառուցելու ճանապարհը

Բոլոր կուսակցություններն անուշիկ բաներ են գրել իրենց նախընտրական ծրագրերում, իսկ թե ինչպես պետք է դրանք իրականացնել, «պատմությունն այս մասին լռում է»: ՀՀԿ ծրագիրը, բնականաբար, համեմված է Նժդեհով եւ գեղեցիկ, պաստառային ձեւակերպումներով. «Հայոց գերագույն նպատակը, որ իմաստավորումն է իր աստվածաստեղծ գոյության, հարատեւումն է Հայրենիքում, հաստատումը իր կենսական ուժի, ստեղծագործ հանճարի ու ազատ կամքի: Այդ նպատակի իրագործման գրավականը Հայ ազգային գաղափարախոսությունն է, որում, ՀՀԿ համոզմամբ, էական տեղ ունի Գարեգին Նժդեհի ուսմունքը»: ՀՀԿ ծրագրում անդրադարձ կա անգամ մեր եւ Աստծո միջեւ հարատեւ կապին, որն, ըստ ՀՀԿ-ի՝ «ապահովվում է Հայ տեսակը հավիտենականացնելու ճանապարհը»:

Հանրապետական կուսակցությունն իր ծրագրում խոստանում է անհատին տալ խորը եւ բազմակողմանի այնպիսի կրթություն, որը կծառայի ազգի եւ հայրենիքի հզորացմանը. «Կրթության համակարգը պետք է ձեւավորի մարդկային եւ ազգային բարձր արժեքներ դավանող սերունդ՝ հաղորդակից մարդկայնորեն վեհ հայոց հոգեւոր, գաղափարական եւ բարոյական արժեքներին, նախնիների մեծագործություններին ու կորուստներին՝ պարզաբանելով մարդկության զարգացման այն օրինաչափությունը, թե մեծագործությունները պայմանավորված են ժողովուրդների ոգու, որով եւ գաղափարի ազնվությամբ ու զորությամբ, իսկ կորուստները՝ դրանց թուլությամբ»: Ըստ այդ փաստաթղթի, պետությունը պետք է անվճար միջնակարգ ուսման հնարավորություն ապահովի բոլորի համար եւ հովանավորի առավել օժտվածների բարձրագույն կրթությունը, բայց պարզից էլ պարզ է, որ ոչ անվճար կրթություն է լինում, ոչ էլ հաճախ օժտվածների ճանապարհը բացվում, որովհետեւ շատ հարցեր մեր երկրում լուծվում են միմիայն ազդեցիկության ու ծանոթությունների միջոցով: Ըստ ՀՀԿ ծրագրի, «Գիտությունն ու մշակույթը պետք է ծառայեն ազգի հոգեւոր եւ նյութական արժեքների վերականգնմանը, պահպանմանն ու զարգացմանը, բացահայտեն հայի տոհմիկ կերպարը, աշխարհընկալումը եւ կենսակերպը: Մշակույթն ու գիտությունը պետք է իրականացնեն ազգային ավանդույթների ու գիտատեխնիկական առաջընթացի զուգակցումը՝ մեր երկրի համար աշխարհում ապահովելով բարոյահոգեբանական, մտավոր եւ տեխնոլոգիական առաջնակարգ դիրքեր»: ՀՀԿ-ն նաեւ խոստանում է բուհերում ուժեղացնել գիտահետազոտական բաղադրիչը, ներդնել գիտության ֆինանսավորման ժամանակակից մեթոդներ, առաջնային ուշադրություն դարձնել հայագիտության զարգացմանը: Եվ սա այն դեպքում, երբ դիցուք՝ eanc.net-ը, այսինքն՝ արեւելահայերենի ազգային կորպուսը ստեղծվել է ոչ հայաստանյան կառույցների, անհատ լեզվաբանների եւ ծրագրավորողների նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ, մասնավորապես՝ Corpus Technologies, ՌԴ Գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտ, Մոսկվայի պետական համալսարան, Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան:




«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը իր ծրագրային ձեւակերպումներում ռոմանտիկությամբ չի զիջում մյուս կուսակցություններին. առաջնորդվելով այն հանրահայտ ճշմարտությամբ, որ մարդը բարձրագույն արժեք է, կուսակցությունն իր գործունեությունը նպատակաուղղել է «Մարդու կողքին, մարդու միջոցով եւ մարդու համար» կարգախոսի իրականացմանը:

Facebook-jan Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում էջում ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը ժամանակին վստահեցրել էր, որ իրենց համար առաջնահերթ է գիտության զարգացման համար համապատասխան պայմանների ապահովումը, տնտեսության հետ գիտության կապի խորացումը, ոլորտի բյուջետային հատկացումների ավելացումը եւ գիտության ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործումը: ԲՀԿ-ն խոստանում է անպայման ուսանողներին աջակցություն ցուցաբերել, հասարակության յուրաքանչյուր անդամի ապահովել մասնագիտական կրթությանը համարժեք բարձր աշխատավարձով: Մշակութային մասով էլ ԲՀԿ ծրագիրն ազդարարում է, թե իրենք ապահովելու են մշակույթի ոլորտի հեղտեւողական, դինամիկ եւ ծրագրային զարգացումը, մշակութային ժառանգության պահպանումը: Հետաքրքիր է, այս տարագայում ինչու է ԲՀԿ-ականների աչքից վրիպել, օրինակ՝ «ծածկած» շուկայի հայտնի պատմությունը եւ ընդհանրապես Հին Երեւանի դիմագիծը կազմող շինությունների սպանդը: Ի դեպ, ԲՀԿ-ն ցանկություն է հայտնել բարձրացնել մշակույթի գործչի, արվեստագետի վարկն ու հեղինակությունը: Բայց ինչպե՞ս՝ ԲՀԿ-ական դարձնելո՞վ, թե՞ տարբեր տրամաչափի ընտրանվերների միջոցով նրանց ինքնասիրությունը շոյելով:

Դեպի Նոր Հայաստան առաջնորդելու խոստում տված ՀՅԴ-ն, որ հպարտ քաղաքացի է ուզում ունենալ, իր նախընտրական ծրագրում խոստանում է «աճեցնել» ներդրումները գիտության եւ մշակույթի ոլորտներում, թե որտեղի՞ց, էլի անհայտ է: Ըստ դաշնակցական տեսլականի, մշակութային քաղաքականությունը կհամարվի երկրում իրականացվող բարեփոխումների, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման նախապայման, յուրաքանչյուր երիտասարդ կկարողանա ինքնադրսեւորվել, ստանալ որակյալ կրթություն, միջին մասնագիտական, բարձրագույն, ինչպես նաեւ նախադպրոցական եւ հանրակրթական հաստատությունները էլ կլինեն ամբողջությամբ անվճար: Ի դեպ, դաշնակցականները հավաստիացնում են, որ իրենց նախընտրական ծրագիրը կառուցված է հետեւողականության, բարոյականության ու արդարության չափանիշներով:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. Գ. Մյուս կուսակցությունների նախընտրական ծրագրերի կրթամշակութային հատվածներին կանդրադառնանք հաջորդիվ:

### Երբ դուռը բաց է




Լույս է տեսել Արսեն Բաբայանի «Դուռը բաց է, մտեք» պատմվածքների ժողովածուն, որտեղ զետեղված են հեղինակի վերջին տարիների ստեղծագործությունները, բացառությամբ «Հյուրանոցում» պատմվածքի...

Որդին վերջապես վերադառնում է տարագրությունից եւ տուն է մտնում հենց այն ժամանակ, երբ հայրն արդեն վերջին վայրկյաններն է ապրում: Հայրական օջախի շնչառությունը շարունակվում է («Դուռը բաց է, մտեք»):

Մեր օրերին բնորոշ ու մեզ հուզող արտագաղթի թեման շոշափված է նաեւ «Տարագրություն» ծավալուն պատմվածքում, ուր հեղինակը մատուցել է երկու վերջաբան. գլխավոր գործող անձը մի դեպքում կնքում է իր մահկանացուն, իսկ մյուսում հասցնում է փախչել այլ երկիր, տեղ գտնել այլ իրականության գրկում, որտեղ, սակայն, մայրամուտներն էլ տարաշխարհիկ են: Կա անդրադարձ նաեւ խորհրդային կարգերի վերացմանը («Փլուզում»):

Մի խոսքով՝ գրքի դուռը բաց է, եւ ով ցանկանա, կարող է ներս մտնել: Սա Արսեն Բաբայանի երրորդ գեղարվեստական գիրքն է, ուր կհայտնվեք ձեզ ծանոթ միջավայրում, կհանդիպեք ծանոթ կերպարների, անգամ գորշ գայլի: Հեղինակի ասելիքը պարզ է, հստակ, տեղ-տեղ խորհրդանշական պատկերներով, եւ առանց որեւէ փականի:

# Դիզայներների աշխատանքը «աչք ծակեց»

## Խաչատրյանական վերջին պրեմիերաներում կրկին նույն նկարիչն է

Օրերս Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում բալետային պրեմիերա էր: Գլխավոր բալետմայստեր Ռուդոլֆ Խառատյանի խորեոգրաֆիայով ներկայացվեցին Վիվալդիի «Տարվա եղանակները» շարքից՝ «Գարուն» եւ Ռավելի «Բոլերո» մեկական գործողությամբ բեմադրությունները: Նվագախումբը ղեկավարում էր թատրոնի երաժշտական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանը:

Ժամանակակից խորեոգրաֆիայով արված այս բալետները թողնենք տեսաբաններին, իսկ նրանք, մեր տվյալներով, հանրապետությունում երկուսն են՝ Հասմիկ Մարկոսյանն ու Նազելի Սարգսյանը:

Հավելենք, որ հանրահայտ ստեղծագործությունների դուրգարյանական մեկնաբանումից գոհ էր հանդիսատեսը: Առանձնացնենք Վիվալդիի ստեղծագործության ժամանակ թատրոնի նվագախմբի կոնցերտմայստեր, ՀՀ վաստակավոր արտիստ Գայանե Աբրահամյանի իսկապես բարձրակարգ կատարումը:




Անդրադառնալով «Գարնանն» ու «Բոլերոյին», հանդիսատեսի եւ մեր «աչքը ծակեցին» զգեստները՝ իրենց ժամանակակից ու գրավիչ դիզայնով: Դրանց հեղինակը Աստղիկ Ստեփանյանն է: Վիվալդիի երաժշտության ուղեկցությամբ դիզայները մտածել էր դիցաբանական միստիկ կերպարներ՝ սպիտակ, փարթամ մազերով, արտահայտիչ աչքերով, նկարազարդված զգեստներով, ինչը խորհրդանշում էր բնության զարթոնքը: «Բոլերոյում» իսպանական ազգային հագուստին բնորոշ տարրերը բացակայում էին, փոխարենը շեշտված, ընդգծված էր արտիստների մարմինը:

Տեղեկացնենք, որ այս աշխատանքների միջոցով երիտասարդ դիզայները երկրորդ անգամ է համագործակցում Ազգային օպերային թատրոնի բալետային խմբի հետ: 2011թ. Աստղիկը իրականացրել է Պրոկոֆեւի «Ռոմեո եւ Ջուլիետ» ներկայացման ոչ միայն զգեստների, այլեւ բեմի դիզայնը: Այս աշխատանքը ներկայացված է ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակին՝ «Բեմանկարչություն» անվանակարգում:

«Առավոտի» հետ զրույցում Աստղիկ Ստեփանյանն ասաց, որ «Ռոմեո եւ Ջուլիետին» մասնակցել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի մագիստրատուրայում սովորելիս: Կեսկատակ-կեսլուրջ հարցին, թե Օպերային թատրոնը կամ Ռուդոլֆ Խառատյանը որտեղի՞ց իրեն «հայտնաբերեցին», մեր զրուցակիցն ընդամենն ասաց, որ ինքը քանդակագործ Գագիկ Ստեփանյանի դուստրն է եւ հոր միջոցով է ծանոթացել բալետմայստերի հետ. «Պարոն Խառատյանը ինձ հրավիրեց փորձի ու ասաց, որ բեմադրելով «Գարունը», ինքը ներշնչվել է Բոտիչելիի հանրահայտ «Գարունը» կտավից, բայց միեւնույն ժամանակ ցանկություն հայտնեց, որ զգեստների վրա աշխատելիս աչքի առջեւ ունենամ ժամանակակից ոճը: Դա իմ սրտով էր. չէ՞ որ ժամանակակիցը հին ու նորի համադրումն է»: Ինչ վերաբերում է «Բոլերոյին», դիզայները հայտնեց, թե ինքը ի սկզբանե ցանկացել է ստեղծել երկրաչափական պարզ գծերով հագուստներ: Հավելեց նաեւ, որ եթե թատրոնում ռեժիսորն իր մտահղացումն արտահայտում է պարով, պարողը՝ ներքին էմոցիաներն է ջանում հասցնել հանդիսատեսին, ապա նկարչի գործն է ստեղծել խոսուն կերպարներ:

Ռեպլիկին, թե անփորձ դիզայների համար միանգամից մեծ բեմում աշխատելը սարսափելի չէ՞ր, Աստղիկը հայտնեց. «Ինչ վերաբերում է մասնագիտական գործունեությանս՝ վախ չունեմ»: Տեղեկացրեց նաեւ, որ բալետային խմբի հետ իր համագործակցությունը կշարունակվի. «Սկսել եմ էսքիզներ պատրաստել Առաջին Հանրապետության օրվա առիթով Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիայի երաժշտությամբ խառատյանական նոր բեմադրության համար»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ